ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1951 *Общественные науки*

Ե. Խալեյան

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ 1901 ԹՎԻ ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑՈՒՅՑԸ

(50-ամյակի առթիվ)

Սրանից ուղիղ 50 տարի առաջ՝ 1901 թ. ապրիլի 22-ին (նոր տոմարով մայիսի 5-ին), Ի. Վ. Ստալինի ղեկավարությամբ Թիֆլիսի փողոցներում կազմակերպվեց բանվորների մայիսմեկյան հուժկու տոնակատարությունը, որը առաջին բացարձակ քաղաքական ցույցն էր Անդրկովկասի պայմաններում։ Այդ ցույցը Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորական ռևոլուցիոն շարժումների պատմության ամենապանծալի էջերից մեկն է։

Դա 20-րդ դարի սկիզբն էր։ Ռուսաստանում ռևոլուցիայի ալիքը բարձրանում էր ամբողջ երկրով մեկ։ Արդյունաբերական ճգնաժամը և դրա հետևանքով առաջ եկած գործազրկությունը ոչ միայն չկասեցրին և չթուլացրին բանվորական շարժումը, այլ, ընդհակառակը, էլ ավելի մեծ թափ հաղորդեցին նրան։ Բանվորների պայքարը ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ, ոկսեց ավելի սուր բնույթ ընդունել,—«բանվորներն սկսեցին տնտեսական գործադուլներից անցնել քաղաքական գործադուլների։ Վերջապես, բանվորները անցնում են ցույցերի, քաղաքական պահանջներ են առաջադրում դեմոկրատական ազատությունների մասին, առաջադրում են «կորչի ցարական ինքնակալությունը» լոզունգը»[1]։

Ռուսական պրոլետարիատի ռևոլուցիոն շարժումների անմիջական ազդեցության տակ, սերտորեն կապված նրա հետ, բանվորական շարժումներ են ծավալվում նաև Անդրկովկասում։ Անդրկովկասի բանվորների ռևոլուցիոն ողջ շարժումները կազմակերպում և ուղղություն էր տալիս ընկեր Ստալինը, իր զինակիցներ՝ Լ. Կեցխովելու, Ա. Ծուլուկիձեի հետ միասին։

Ընկեր Ստալինի գլխավորած Թիֆլիսի ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատական ղեկավար կենտրոնական խումբը 1898—1900 թթ. իմբակային պրոպագանդայից անցնում է բանվորների մեջ մասսայական ագիտացիայի, ինքնակալության դեմ բացարձակ պայքարի։ Այդ ուղղությամբ աչքի ընկնող դեր է կատարում 1900 թվականի ամառվանից Անդրկովկաս եկած հմուտ ռևոլուցիոն մարքսիստ Վ. Կուռնատովսկին, որը դառնում է ընկեր Ստալինի մերձավոր զինակիցն ու բարեկամը։

Անդրկովկասի բանվորական շարժման պատմության մեջ շրջադարձային հանդիսացող այդ էտապը նշանավորվեց գործարաններում և ֆաբրիկաներում հարաճուն թափով զարգացող գործադուլներով ու անլեզալ մայիսվկաներով, որոնք 1900—1901 թթ. վերածվեցին մասսայական քաղաքական հուժկու գործադուլների ու բացարձակ ցույցերի։ «...Բանվորա-

---

1 *Համկ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց, Հայպետհր. 1946 թ., էջ 37։*

կան շարժումն իրեն համար ուղի էր հարթում և առաջ շարժվում—գրում էր այդ ժամանակաշրջանի մասին ընկեր Ստալինը,—առանձին առվակները միանալով՝ կազմում էին մի հեղեղ, շարժումը դասակարգային երանգ էր ստանում և հետզհետե ոտք էր դնում քաղաքական պայքարի ուղին։ Բանվորական շարժումն աճում էր ապշեցուցիչ արագությամբ...»։[1]

1900 թ. ապրիլի 19-ին Թիֆլիսի բանվորները ընկեր Ստալինի ղեկավարությամբ քաղաքից դուրս՝ Ագի լճի մոտերքը անց են կացնում իրենց երրորդ՝ անլեգալ մայվկան, որին մասնակցում էին Թիֆլիսի տարբեր գործարանների 400—500 հոգի՝ վրացի, հայ, ռուս առաջավոր բանվորներ։ Մայվկայում բարձրացրած իրենց կարմիր դրոշը բանվորները զարդարել էին Մարքսի և Էնգելսի նկարներով և հայերեն, վրացերեն, ռուսերեն լեզուներով գրված «Կեցցե 8 ժամյա բանվորական օրը» լոզունգով։

Միտինգում բոցաշունչ ճառով հանդես է գալիս ընկեր Ստալինը։ Նա խոսում է բանվոր դասակարգի քաղաքական պայքարի խնդիրների, բանվորների ինտերնացիոնալ միասնության մասին և կոչ է անում գալիք մայիսմեկյան տոնը անցկացնել Թիֆլիսի փողոցներում, այն վերածել ցարիզմի ու կապիտալիզմի դեմ ուղղված բացարձակ քաղաքական ցույցի։

Ժանդարմական ոստիկան Զասիպկինը 1900 թ. ապրիլի 19-ի մայվկայի մասին՝ Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետին ուղարկած իր № 483 զեկուցագրի մեջ գրում է. «...սույն հավաքույթում ագիտացիա էին անում և գրգռում էին բանվորներին դեմոնստրատիվ կերպով՝ բացահայտորեն տոնել մայիսի 1—ի օրը, ձգտել պրոպագանդայի միջոցով գրավել իրենց կողմը բոլորին և նույնիսկ զորքին, չվատվել, եթե բանտ նստեն և այլն...»։[2]

Բանվորների ցնծությունը սահման չուներ։ Նրանք մայվկայից վերադառնում են էլ ավելի ոգևորված բանվոր դասակարգի մեծ գործով, նրանց գիտակցության մեջ անջնջելի կերպով տպավորվել էր ընկեր Ստալինի ճառը՝ մայվկայում բարձրացրած ռևոլուցիայի կարմիր դրոշը ամուր բռնելու և այն անբիծ կերպով մինչև վերջնական հաղթանակը տանելու մասին։

1900 թվի ամռանը գործադուլների նոր ալիք է բարձրանում ամբողջ Թիֆլիսում։ Դրանցից ամենախոշորը երկաթուղային գլխավոր արհեստանոցների և Դեպոյի բանվորների օգոստոսյան ընդհանուր գործադուլն էր, որին մասնակցում էին մոտ 4000 բանվորներ։

Գործադուլը ղեկավարում էր ընկեր Ստալինը՝ Պետերբուրգից Թիֆլիս աքսորված Թիֆլիսի երկաթուղու գլխավոր արհեստանոցում աշխատող խառատ, ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատ Մ. Ի. Կալինինի ակտիվ մասնակցությամբ։ Գործադուլը հանրագումարի է բերում Թիֆլիսի բանվորների այդ տարվա ելույթների արդյունքները, էլ ավելի սերտորեն համախմբում է բանվորներին, նոր թափ է հաղորդում բանվորական խմբակների կազմակերպմանը։ «Ինչպես սունկերը անձրևից հետո, սկսեցին շարունակ նորանոր խմբակներ աճել ու մեծանալ։»[3] Այդ հաջողությունների մեջ խոշոր դեր էր կատարում տպագիր պրոպագանդան։ Անլեգալ կերպով հրապարակվող

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 102։

[2] Մայիսմեկյան ցույցը Թբիլիսիում 1901 թ. Երևան, Պետհրատ, 1941 թ., էջ 100։

[3] «Բրձոլա» № 2—3, 1901 թ.։

կոչերը խորհուրդ էին տալիս բանվորներին՝ պայքար մղել ցարական ինքնակալության դեմ, բացատրում էին, որ առանց դրան անհնարին է սանձահարել կապիտալիստներին։

1900 թվի վերջերին Վ. Ի. Լենինը «Մայիսյան օրերը Խարկովում» բրոշյուրի առաջաբանում, առաջիկա մայիսյան ցույցը կազմակերպելու մասին հետևյալ ցուցումն էր տալիս՝ «Կես տարուց հետո ռուս բանվորները կտոնեն նոր դարի առաջին տարվա մայիսի 1-ը,— և ժամանակն է հոգ տանելու այն մասին, որպեսզի այդ տոնակատարությունը որքան կարելի է ավելի շատ կենտրոններ ընդգրկի, որպեսզի այն որքան կարելի է ավելի ազդու լինի ոչ միայն իր մասնակիցների թվով, այլև նրանց կազմակերպվածությամբ, նրանց գիտակցականությամբ, նրանց վճռականությամբ՝ անհողդողդ պայքար սկսելու ռուս ժողովրդի քաղաքական ազատագրության համար և դրանով իսկ պրոլետարիատի դասակարգային զարգացման ու հանուն սոցիալիզմի նրա բացահայտ պայքար մղելու ազատ ասպարեզի համար»[1]։

Ընկեր Ստալինը հետևողականորեն կենսագործելով լենինյան ցուցումները, Վ. Կուռնատովսկու և առաջավոր բանվորների հետ միասին ամենաեռանդուն աշխատանք էր կատարում 1901 թվի մայիսմեկյան քաղաքական ցույցը կազմակերպելու ուղղությամբ։

Սկզբում նախատեսված էր ցույցը կատարել ապրիլի 18-ին (մայիսի 1-ին)։ Պահնորդական բաժանմունքը իր լրտեսների միջոցով տեղեկանալով ցույցի օրվա մասին, ուժեղացնում է հսկողությունը։ Ժանդարմական ռոտմիստր Լավրովը այդ մասին՝ 1901 թվի մարտի 10-ին Թիֆլիսի ժանդարմական վարչության պետին գրած զեկուցագրի մեջ հայտնում է. «...բանվորական խմբակներում կատարվում է գործունյա նախապատրաստություն առաջիկա բանվորական տոնի համար (մայիսի 1-ին՝ նոր տոմարով). յուրաքանչյուր շաբաթ և կիրակի տեղի են ունենում մի քանի հավաքույթներ, բանվորներին սովորեցնող ինտելիգենտների մասնակցությամբ»[2]։

Ժանդարմերիան եռանդուն կերպով սկսում է խուզարկություններ կատարել և ձերբակալել Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամներին։ 1901 թվի մարտի 22-ի գիշերը ձերբակալվում է Վ. Կուռնատովսկին։ Նույն գիշերը խուզարկություն է կատարվում ֆիզիկական Օբսերվատորիայում, որտեղ ապրում և աշխատում էր ընկեր Ստալինը։ Ժանդարմական վարչությունը ընկեր Ստալինին ձերբակալելու որոշում է արձակում և կատաղի կերպով որոնում է նրան. Ընկեր Ստալինը այդ օրվանից անցնում է անլեգալ դրության։

Ստեղծված նոր իրադրության պատճառով ցույցի օրը փոխվում և նշանակվում է ապրիլի 29-ը (մայիսի 5-ի կիրակի օրը)։ Խիստ կոնսպիրացիայի պայմաններում կրկնապատկված լարվածությամբ շարունակվում է աշխատանքը։

Մի տեղում ընկեր Ստալինի ղեկավարությամբ քննարկվում էր ցույցի պլանը, մի այլ տեղում՝ բանվորները՝ ընկեր Ստալինից ստացած լո-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4-րդ (4-րդ հրատ.), էջ 458։

[2] Մայիսմեկյան ցույցը Թբիլիսիում 1901 թ. Երևան, Քաղպետհրատ, 1941 թ., էջ 102։

դունդներն էին գրում, կարմիր դրոշն էին պատրաստում, երբորդ տեղում ռևոլուցիոն երգեր էին սովորում և այլն։

Սոցիալ-դեմոկրատական ագիտացիան բորբոքել էր բանվորների ցասումը ընդդեմ գործարանատերերի և բոլոր շահագործողների, ընդդեմ ցարական բռնակալության։ Բանվորները անհամբեր սպասում էին ցույցի օրվան. նրանք հատուկ պատրաստություններ էին տեսել՝ ձեռք էին բերել ձեռնափայտեր, ոմանք նույնիսկ զենքեր՝ ոստիկանության և ժանդարմերիայի կողմից հարձակման ենթարկվելու դեպքում օգտագործելու համար։

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ մեկը մյուսի հետևից երևան են գալիս Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական զեկավար խմբի վրացերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով գրված անլեգալ պրոկլամացիաները, որոնք հեղեղում են քաղաքի փողոցներն ու գործարանները։ Ռևոլուցիոն լարված իրադրության պայմաններում լույս տեսած այդ պրոկլամացիաներից մեկում, որը մայիսմեկյան ցույցի նախապատրաստման մասին լենինյան առաջադրանքի կոնկրետ արձագանքն էր, ասվում է. «Ամբողջ Ռուսաստանի բանվորները որոշել են մայիսի 1-ը տոնել բացահայտորեն՝ քաղաքի գլխավոր փողոցներում։ Նրանք իշխանությանը հպարտորեն հայտարարեցին՝ թե չեն վախենում կազակների մտրակներից ու թրերից, ժանդարմների և ոստիկանների կողմից սպառնացող տանջանքներից։

Միանանք, ուրեմն մենք ևս, բարեկամներ, Ռուսաստանի ընկերների հետ։ Ձեռք մեկնենք միմյանց, վրացիներս, ռուսներս, հայերս, ի մի ժողովենք, պարզենք կարմիր դրոշը և տոնենք մեր միակ տոնը՝ մայիսի 1-ը»[1]։

Մարտ և հատկապես ապրիլ ամիսներին առավել լարված դրություն էր տիրում քաղաքում։ Բանվորական ռևոլուցիոն բուռն շարժումների աճումից անարեկված Կովկասյան փոխարքայությունը նույնպես տենդորեն պատրաստվում էր։ Կովկասյան զինվորական օկրուգի շտաբի հրամանով քաղաքի պահպանության համար երկաթուղու գլխավոր արհեստանոցների, կայարանի և գործարանների շուրջը տեղավորվում են զորական միավորումներ։ Մարտական գործողությունների համար պատրաստ վիճակում քաղաքի տարբեր մասերում կենտրոնացվում են 44-րդ Նիժեգորոդյան գնդի դրագունական հեծելազորի էսկադրոնները, 16-րդ մենգրելյան գրենադերական գունդը, 15-րդ՝ Թիֆլիսի գրենադերական և կազակային Խոպերյան գնդերը, Կովկասյան առանձին 4 բատալիոնները և ուրիշներ։

Ապրիլի 15-ից քաղաքի փողոցներում անընդհատ շրջում էին դրագունների և կազակների պահակախմբերը։ Զորքին մարտական փամփուշտ էր բաժանված. հատուկ պլանով խիստ հսկողություն էր սահմանված. կարգադրված էր ցույցի դեպքում անմիջապես բռնել քաղաքի հրապարակները, կամուրջները, խաչմերուկ փողոցները և այլն։ Ոստիկանությունը ցրում էր մինչև անգամ երեք հոգուց բաղկացած խմբերը։ Կովկասյան կառավարչապետ Գոլիցինը սարսափից էլիզավետապոլ էր «գնացել» իրը թե որսի և նկեղեցու օրհնության ներկա գտնվելու։ Ամբողջ քաղաքը ռազմական ճամբարի էր վերածվել։ Երությունը ավելի է լարվում, երբ ապրի-

---

1. Տես Լ. Պ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, Հայպետհրատ, 1945 թ., էջ 26։

լի 21-ին ուշ երեկոյան ժանդարմերիան տեղեկանում է ցույցի օրվա և վայրի մասին։ Ոստիկանական մեծ խմբերը անմիջապես շրջապատում են Ալեքսանդրյան այգին, Սալդատսկի բազարը և Սեմինարիայի շենքը, որտեղ փակված դրության մեջ են պահում ուսանողներին։ Մոտակա բոլոր փողոցները լցնում են պահակախմբերով. ամբողջ գիշեր մանրադնին կերպով խուզարկություններ և ձերբակալություններ են կատարվում քաղաքում։ Ձերբակալվածներին ուղարկում են Մետեխի բանտը, որը լեփ-լցվում է քաղաքական բանտարկյալներով։

Չնայած այս բոլոր ձեռնարկումներին, իշխանությանը չի հաջողվում, կանխել մայիսմեկյան ցույցը։

Կիրակի օրը՝ ապրիլի 22-ին (մայիսի 5-ին) վաղ առավոտվանից, համաձայն նախատեսված պլանի, բանվորները տարբեր ուղղություններով խումբ-խումբ, կամ առանձին-առանձին՝ շարժվում են դեպի Սալդատսկի բազարը՝ որպես գնորդներ։ Այս կարգով առավոտյան ժամը 10-ին արդեն ցույցի վայրն են հավաքվում ավելի քան 2000 բանվորներ, որոնք խառնված շուկայի բազմության հետ, սպասում են ցույցի սկսվելուն։ Ցույցի ամբողջ ընթացքը անձամբ ղեկավարում էր ընկեր Ստալինը, որը իր մերձավոր օգնականների՝ Մ. Իսաորիձեի, Զ. Զոդրիշվիլու և Դ. Թելիայի ուղեկցությամբ բանվորների հետ եկել էր նշանակված վայրը։

Ցուցարարների ավանգարդում էին գտնվում երկաթուղու գլխավոր արհեստանոցների և Դեպոյի բանվորները։ Ցույցի էին եկել կոշկեղենի, ծխախոտի ֆաբրիկաների և մյուս հիմնարկների բանվորները, սոցիալ-դեմոկրատ ինտելիգենտներ և ուրիշներ։

Ցուցարարների այդպիսի մեծ բազմություն հավաքվելու փաստը վկայում էր ընկեր Ստալինի հմուտ աշխատանքի մասին։ 1900 թվականի մայիսի ժամանակ՝ ընկեր Ստալինի առաջարկությամբ բանվորներն ընդունել էին որոշում՝ առաջիկա տոնին ամեն մեկը պարտավոր էր իր հետ բերել 10-ական նոր ընկեր։ Այս առաջադրանքը կատարված էր փայլուն կերպով։ Վրացի, ռուս ցուցարարների շարքերում էին գտնվում նաև առաջավոր շատ հայ բանվորներ՝ Դեռուշկան (Մելիք Մելիքյան), Արմենակ Նալչաջյանը, Անուշավան Վարդանյանը և ուրիշներ։

Որոշված ժամին ընկեր Ստալինի առաջարկով վեր է բարձրանում կարմիր դրոշակը և սկսվում է ցույցը։ Դրոշի վրա նկարված էին Մարքսի և Էնգելսի նկարները և գրված՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք» լոզունգը՝ հայերեն, վրացերեն, ռուսերեն լեզուներով։

Դրոշակի բարձրանալու հետ միաժամանակ հաղարավոր ցուցարարների բերանից հնչում են ռևոլյուցիոն հուժկու կոչերը՝ «Կեցցե մայիսի 1-ը», «Գործչի ցարական ինքնակալությունը», «Կեցցե 8 ժամյա բանվորական օրը» և այլն։

Շփոթված ոստիկանությունը խոնվում է բազմության մեջ. փորձում է կասեցնել ցույցը, բայց նրա ջանքերն անցնում են ապարդյուն։ Ոստիկանությանը օգնության են գալիս մոտակայքում արդեն պատրաստ կանգնած հեծյալ ժանդարմերիան և կազակային ջոկատները։ Վերջիններս մըտրակներով ու մերկացրած սրերով զազանային կատաղությամբ հարձակվում են ցուցարարների վրա... սկսվում է մի չտեսնված իրարանցում...

Բանվորները հերոսաբար ընդունում են մարտը և ամեն կերպ աշխա-

տում են կանգուն պահել կարմիր դրոշը, որը խլելու համար կատաղի ճիգեր են գործադրում ժանդարմներն ու կազակները։ Առաջին զոհերը տալուց հետո, բանվորները համառ ձեռնամարտում արյունաշաղախ անելով գետին են գլորում մի քանի ոստիկաններ։ Այսպես՝ ձեռքից-ձեռք տալով դրոշակը, ցուցարարների բազմությունը անցնում է որոշ տարածություն դեպի սեմինարիայի կողմը, բայց այդտեղ դեմ է առնում կազակների նոր խմբերի, որի հետևանքով ցույցը դարձյալ շարունակվում է իր նախկին տեղում։

Ցուցարարներից մեկը՝ Մամալաձեն պատմում է, որ «... անարտահայտելի զգացմունք էր այն ժամանակ մղում մեզ... մենք դրոշակը ցած չէինք թողնում, բռունցքով ետ մղելով պաշտպանվում էինք մեզ վրա հարձակվող թշնամիներից...

Ես չէի հեռանում դրոշակից այնքան ժամանակ, մինչև որ անզգա ընկա սալարկի վրա։ Նույն բանը պատահեց մեր շատ ընկերների հետ»[1]։

Կատաղի գոտեմարտը տևում է ավելի քան երեք քառորդ ժամ։ Բանվորներից 14 հոգի ծանր վիրավորվում են, 50 հոգի ձերբակալվում և Մետեխի բանտն են նետվում։ Չնայած նրան՝ այդ օրը ցուցարարները քաղաքական մեծ հաղթանակ տարան։ Նրանց հաջողվեց ռուսական ինքնակալության Կովկասյան այդ միջնարերդում՝ Թիֆլիսում հրապարակորեն նշանավորել պրոլետարիատի մեծ տոնը՝ մայիսի 1-ը, մերկացնել շահագործող դասակարգերի, ցարիզմի հակաժողովրդական ողջ էությունը։ Ցույցից հետո էլ ամբողջ երեք օր Թիֆլիսը պահվում է ռազմական դրության մեջ, շարունակվում են մասսայական խուզարկություններն ու ձերբակալությունները։

Այդ մայիսյան շատ բան փոխեց բանվորական շարժման մեջ, նա դրեց Անդրկովկասի պրոլետարիատի բացահայտ ռևոլյուցիոն շարժումների սկիզբը, ամրապնդեց բանվորների հավատքը, իրենց ուժերի ու հաղթանակի նկատմամբ ամրապնդեց նրանց ռևոլյուցիոն վճռականությունը, «հսկայական ռևոլյուցիոն ազդեցություն գործեց ամբողջ Կովկասի վրա»[2]։

Աննախընթաց կերպով աշխուժացան և ծավալվեցին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքները։ 1901 թվի սեպտեմբերին ընկեր Ստալինի և Կեցխովելու խմբագրությամբ Բաքվում լույս է ընծայվում Թիֆլիսի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատների առաջին անլեգալ օրգանը՝ «Բրձոլա» թերթը (վրացերեն), որը լենինյան «Իսկրայից» հետո լավագույն լենինյան-իսկրայական թերթն էր Ռուսաստանում։ Նույն թվի նոյեմբերին Թիֆլիսի պարտիական կենտրոնական խմբի քաղաքական-կազմակերպչական աշխատանքներն ավարտվում են ՌՍԴԲՊ Թիֆլիսի լենինյան իսկրայական ուղղության կոմիտեի ընտրությամբ, որի կազմի մեջ մտավ ընկեր Ստալինը։

Լենինյան «Իսկրան» ջերմորեն ողջունում է Թիֆլիսի մայիսմեկյան ցույցը, բարձր գնահատական է տալիս նրան և հիացմունքով լի մի շարք թղթակցություններ է տպագրում, հատուկ բրոշյուր է հրատարակում Թիֆ-

1. Մայիսմեկյան ցույցը Թբիլիսիում 1901 թ., Քաղաքատպարատ, Երևան, 1941 թ., էջ 82—83։

2. Լ. Գ. Երիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, Հայպետհրատ, 1945 թ., էջ 26։

լիսի բանվորական և սոցիալ-դեմոկրատական շարժման մասին։ «Կովկասի բանվորական շարժումը 1899—1901 թ.թ.» վերնագրով ծավալուն հոդված է տպագրում ստալինյան «Բրձոլան» իր 2—3 միացյալ համարում և արժանի գնահատական է տալիս Թիֆլիսի մայիսմեկյան ցույցին։

Ընկեր Ստալինի գլխավորած ՌՍԴԲՊ Թիֆլիսի կազմակերպության աշխատանքների այս նոր թափը և աշխուժացումը իրենց հերթին արտակարգ խուճապ ու անհանգստություն են առաջացնում ինչպես Կովկասյան փոխարքայության, նույնպես և Պետերբուրգի ցարական շրջաններում։

1902 թվականի մարտի 12-ին՝ ոստիկանական դեպարտամենտի դիրեկտոր Զվոլյանսկին իր զեկուցագրում տեղեկացնելով Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ վրացիների ու հայերի ունեցած ակտիվ գործունեության մասին, արձանագրում է, որ այդ գործունեությունը վերջին երկու տարվա ընթացքում ժամանակ առ ժամանակ դրսևորվել է բանվորական հավաքույթների, ժողովների, գործադուլների, մարտական դրամարկղների կազմակերպման միջոցով, իսկ 1901 թ. ապրիլին արտահայտվել է նույնիսկ ոստիկանության ու զորքի հետ բանվորների զինված ընդհարման ձևով:

«...Թիֆլիսում,—ասված է զեկուցագրում,—ըստ երևույթին գործում է միանգամայն ճիշտ և լավ կոնսպիրացիայի ենթարկված կազմակերպություն, որին չեն կարողանում հայտնաբերել տեղական հետախուզիչ ուժերը։ Համարյա պատահական և մեծ մասամբ ապարդյուն խուզարկությունները ու ձերբակալությունները նպատակին չեն հասնում և շարժումը շարունակում է արագորեն աճել»[1]։

Գազազած ցարական ադմինիստրացիան տմարդի մեթոդներով վրեժ է լուծում բանտարկվածներից։ Հատկապես ծանր էր Մետեխի բանտում բանտարկված բանվորների և սոցիալ-դեմոկրատ ինտելիգենտների դրությունը։ Նրանցից ոմանք մի քանի վերքեր ու ջարդվածքներ ունեին իրենց մարմնի վրա, որ ստացել էին ցույցի ժամանակ։ Նրանց տանջում էին հարցաքննությունների ժամանակ, բանտապետի հրամանով կափարիչներով փակում էին բանտի խցիկների դրսի նեղ երկաթացանց պատուհանները և զրկում էին բանտարկյալներին օդից ու լույսից։ Բայց այս բոլորը, մազաչափ անգամ չէին ընկճում ստալինյան կոփվածք ստացած քաղաքական բանտարկյալների կամքը։

1902 թ. նոյեմբերի 21-ին ցարական կառավարությունը բանտարկված ցուցարարներին խումբ-խումբ սկսում է աքսորել Սիբիր։ Այդ կապակցությամբ ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեն բաց է թողնում ցարիզմի հակաժողովրդական քաղաքականությունը մերկացնող, բանվորներին քաջություն ներշնչող թռուցիկներ վրացերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնցից մեկում ասված է.

«Բանվոր ընկերներ.

Ժողովրդի մշտական թշնամի կառավարությունը չէ նիրհում։ Նա միայն նրա մասին է մտածում, թե ինչպես ճնշե ժողովրդական շարժումը,

---

[1] „Первое мая в царской России. 1890—1916 гг.“, Сборник документов. ОГИЗ. 1943 г., էջ 33 (ընդգծումները մերն են։ Ե. Խ.)։

թե ինչպես խեղդե ճշմարտության ձայնը։ Ապրիլի 22-ին Թիֆլիսի ցույց անողներին հայտարարված է, որ հայրենիքից աքսորում են։ Այո, աքսորում են, բայց ինչու։ Նրա համար, որ նրանք հրապարակորեն համարձակվեցին հակառակել թշնամուն, նրա համար, որ նրանք հրապարակորեն բարձրացրին ճշմարտության և բարեկեցության դրոշը ... Բանվորներ. դուք տեսնում եք թե ինչպես անխղճորեն է վերաբերվում դեպի մեզ կառավարությունը, թե ինչպիսի տմարդի միջոցներով է կամենում խեղդել մեր մեջ արթնացող մարդկային արժանիքի գիտակցությունը ու ձգտում վերացնել ճորտությունը։ Ո՛չ, չենք կամենում մենք նախկին շղթաները, նրանք քանդված են, փշրված և ոչ մի ուժ այլևս անկարող է մեզ նորից շղթայել։ Ո՛չ, այլևս մեզ չեն կարող վերադարձնել հին անգիտակցությունը, նա արդեն ցրված է ճշմարտության ճառագայթներից։

Թող մեզ աքսորեն, թող մեզ պատժեն, այդ մեզ չի ընկճի. նրանք մեզ չեն կանգնեցնի և ճանապարհից շեղի։ Հիշեցեք, որ մեզ հետ է ճշմարտությունը, մեզ հետ ամբողջ բանվորական Կովկասը և Ռուսիան»[1]։

Նոյեմբերի 21-ին՝ աքսորյալներին Ռուսաստան ուղարկելու օրը, բանվորների մի մեծ բազմություն՝ սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ, գնացքի մեկնումից քիչ առաջ գալիս են կայարան և հավաքվում բանտային վագոնների շուրջը։ Այստեղ՝ բանվորները, բարձրացնելով կարմիր դրոշը, հակակառավարական միտինգ են անում և ապա ետ մղելով իրենց վրա հարձակվող ոստիկաններին, երկար ժամանակ քայլում են շարժվող գնացքի հետ, ռևոլյուցիոն երգերով ոգեշնչում ու բարի ճանապարհ են մաղթում աքսոր գնացող ընկերներին։

Ահա այս է 1901 թ. ապրիլի 22-ի (մայիսի 5-ի) Թիֆլիսի մայիսմեկյան քաղաքական ցույցի համառոտ պատմությունը, որը Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորական շարժման հերոսական տարեգրության մեջ մտավ որպես բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի փայլուն օրինակներից մեկը։

* * *

Ստորև մեջ ենք բերում 1901 թվի հուլիսին «Բրձոլայի» №6-ում տպագրված „Первое мая в Тифлисе“ թղթակցությունը՝ նվիրված Թիֆլիսի պրոլետարիատի 1901 թ. մայիսմեկյան քաղաքական ցույցին։

Первое мая в Тифлисе

Событие, бывшее в воскресенье 22 апреля (ст. стиля) в Тифлисе, является исторически-знаменательным для всего Кавказа: с этого дня на Кавказе начинается открытое революционное движение. Уже 3—4 года, как тифлисские сознательные рабочие начали сплачиваться под общим рабочим знаменем и начали соединенными силами вести борьбу против господствующих классов и против настоящего государственного строя...

...Прежде всего нужно заметить, что с недавнего времени началась усиленная и энергичная социалистическая пропаганда среди рабочих

1. Ցիտատը վերցված է կոչի հայերեն ընագրից, տես՝ „Первомайская демонстрация в Тбилиси в 1901 году"—Сахелгами, сектор полит. литературы, 1939, стр. 57.

кружков, хорошо организованных, а рабочие собрания, беседы о рабочем вопросе и распространение в громадном количестве брошюр между русскими, грузинскими и армянскими рабочими,—все это имело значительное влияние на рост и развитие рабочей партии. Праздник первого мая также имел воспитательное значение для рабочих. Этот праздник за последние годы совершался за городом, далеко от полиции и от глаз администрации. В прошлом году, напр., несмотря на отвратительную дождливую погоду, более 400 рабочих разных национальностей праздновали первое мая за 4 версты от города на открытом воздухе в одном ущелье. В этом же году местный комитет решил отпраздновать первое мая, устроив торжественную манифестацию в городе. Этого хотели и сами рабочие, но не того хотела администрация: начались ежедневные аресты, обыски. В настоящее время Метехский замок и губернская тюрьма переполнены арестованными рабочими и социалистами; число их доходит до нескольких сотен, а, может быть, и до тысячи: факт тот, что сажать больше некуда, и новых арестованных отправляют в военную тюрьму. От последних движений в больших городах наше идиотское правительство совсем потеряло голову. Представьте себе, что оно еще за неделю до 22 апреля расставило драгун и казаков вокруг железнодорожных и городских мастерских и заводов, чтобы нагнать страх на рабочих и заставить их таким образом отказаться от празднования первого мая. Но рабочие не испугались: они решили отпраздновать свой праздник во чтобы то ни стало. День праздника—22 апреля (первое воскресенье после первого мая), а место сборища—Солдатский базар в центре города. Оттуда кортеж должен был направиться по Пушкинской улице на Эриванскую площадь, а потом на Дворцовую улицу и Головинский проспект. В назначенное время число собравшихся рабочих достигло до 3000 чел. Сигнал был дан, и красное рабочее знамя поднялось и заколыхалось в воздухе; на нем были портреты Маркса, Лассаля и Энгельса и надписи на грузинском, армянском и русском языках: «Рабочие всех стран соединяйтесь!», «Да здравствует восьмичасовая работа!». При виде знамени раздались громовые голоса: «Да здравствует республика, да здравствует свобода, да здравствует восьмичасовая работа!». Администрации было известно о манифестации, и она заранее приняла свои меры: как только процессия двинулась, со всех сторон на участников ее набросились жандармы и сыщики, имея во главе известного своим зверством жандармского капитана Лаврова, полицейские и солдаты. Они били манифестантов нагайками и обнаженными шашками, у рабочих же почти ничего не было, кроме мускулистых рук для самозащиты. Невозможно описать ту возмутительную картину, которая получалась при поголовном избиении манифестантов. Страшная паника настала во всем городе. В некоторых местах остановилась конка: кучера соскакивали и бежали к месту побоища на помощь к своим братьям рабочим. Отчаянная борьба продолжалась три четверти часа; за это время много крови было пролито, много раненых пало! Вот падает раненый рабочий; он весь в крови; полицейские начинают топтать его ногами, а он, не переставая, продолжает кричать: «Да

здравствует социализм, да здравствует восьмичасовая работа!» В другом месте одна женщина (там было несколько женщин манифестанток), увидев зверские удары одного пристава, с яростью напала на него, разорвала на нем мундир и целыми клоками стала вырывать у него волосы. Атлет-знаменоносец Аракел (армянин) схватывает одной рукой обнаженную шашку, поднятую над его головой, и ломает ее на две части. Рабочий Махарадзе[1] (грузин), получив три раны саблей, выстрелил несколько раз из револьвера и ранил двух городовых. Пристав Гедеванов тяжело ранен. Сам полицмейстер Ковалев, получив сильные удары в ногу, вынужден был слезть с лошади и сесть в экипаж. Вскоре явились казаки, а за ними губернатор. Манифестанты были рассеяны. Целых три дня после того Тифлис был на военном положении. Арестованных много, хотя официальная газета «Кавказ» сообщает, будто их всего 41 человек. Немецкий студент, защищавший рабочих, получил тяжелые раны от полицейских и умер (?) в тюрьме[2]

Тифлис, май 1901 г.
„Искра" № 1, июль, 1901 г.

---

[1] Правильно—Мамаладзе. Примеч. Е. Х.

[2] «Իսկրա»-յի համար պատրաստված այս թղթակցությունը գրված է եղել հայերեն լեզվով։ Խմբագրությունը այն թարգմանել է ռուսերենի և որոշ կրճատումներով զետեղել թերթի «Բանվորական շարժումների խրոնիկա և նամակներ գործարաններից ու ֆաբրիկաներից» բաժնում։

Թղթակցությունը կազմվել է ցույցին ակտիվ մասնակցած, առաջավոր բանվոր պրոպագանդիստ, սոցիալ-դեմոկրատ Դեդուշկայի (Մելիր Մելիքյանի) հաղորդած տեղեկությունների հիման վրա։ Ե. Խ.